ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 31

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.07.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Գեղամասար համայնքի ավագանու 17.07.2019 թվականի թիվ 4 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

1.Գեղամասար համայնքի ավագանու <<Գեղամասարի համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 17.05.2019 թվականի N14 որոշման մեջ փոփոխություններ կատարելու հարցը:

2.Կարեն Ռազմիկի Աղաբեկյանին պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու հարցը:

3.Գեղամասար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքի միջոցով օտարելուն համաձայնություն տալու հարցը:

4.<<ՍՔԱՅ ԷՆԵՐՋԻ>> ՍՊԸ-ին պատկանող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու հարցը:

5.Գեղամասար համայնքի 2019 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու հարցը:

6.Գեղամասար համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը վարձակալության տրամադրելու թույլտվության հարցը:

7.<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի>> հետ համատեղ Գեղամասար համայնքում իրականացվող <<Գեղամասար համայնքի ճանապարհների բարեկարգում և գյուղատնտեսության զարգացում>> ծրագրին հավանություն տալու հարցը:

8.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի հարցը:

9.Գեղամասար համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն ստանալու հարցը:

10.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի համապատասխան բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու հարցը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՆՇԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԳԵՂԱՄԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԵՏԱՐԱՆ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛЬНАЯ ФЕДАМАСАР
GEGHARKUNIK REGION GEGHAMASAR MUNICIPALITY
08420881